ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2021թ. թիվ 781-Ա

Ա.ՍԻՄՈՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 29-րդ հոդվածի 7-րդ կետի և 95-րդ հոդվածի 1-ին կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետը և հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Յաղդանի հիմնական դպրոց» և «ՀՀ Լոռու մարզի Կողեսի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների միացյալ կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի նոյեմբերի 29-ի գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Անահիտ Բաբկենի Սիմոնյանին վերանշանակել «ՀՀ Լոռու մարզի Յաղդանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում և նրա հետ 2017 թվականի հունվարի 27-ին կնքած աշխատանքային պայմանագրի ժամկետը երկարաձգել հինգ տարի ժամկետով՝ մինչև 2027 թվականի հունվարի 29-ը ներառյալ:

2. Ա.Սիմոնյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 29-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

11/30/2021

X

ԳՈՌ ԱՍՐՅԱՆ

Գ.ԱՍՐՅԱՆ

2021թ. նոյեմբերի 30
ք.Վանաձոր